ջևանում հանդիպելով, եկեղեցական շքեղ հանդէս կատարեցին և «պատուեալ փառաւորեցին զսուրբ Աջն լուցմամբ պայծառ մոմեղինաց և բուրմամբ առնուշահոտ խնկոց և զենմամբ խոյոց և զուարակաց։» Նախիջևանից «աշխարհախումբ բազմութեամբ» առան բերին Ս. Աջն և «հանգուցին ի սեպհական և ի բնական ամոռն իւր» Ս. Էջմիածին։ Թէ կաթուղիկոսն և թէ բոլոր եկեղեցական և աշխարհական բազմութիւնն իրենց անհուն ուրախութիւնն յայտնում էին նորանով, որ «բազում և անթուելի պարգևս բաշխեցին Վրթանէս եպիսկոպոսին, այլ և որքան նուէրք և աջահամբոյր, զոր նուիրեցին ժողովուրդքն սրբոյ Աջոյն, զայն ևս զբովանդակն շնորհեցին Վրթանէս եպիսկոպոսին։» Բացի այս պարգևներից Վրթանէս եպիսկոպոսին շնորհուեցաւ արտօնութիւն, քանի կենդանի է, ամոռական մնալու (տեղապահ), մինչև ծերութեան տարիները մնաց նա արդարև Ս. Էջմիածնում, բայց վերջը տկարութեան պատճառով հեռացաւ դէպի իւր հայրենի գիւղն Օծոպ Նախիջևանի կողմերում, և այնտեղ իւր ազգականների մօտ վախճանուելով, թաղուեցաւ Օծոպու Ս. Աստուածածնի վանքում 1493 թուին։ Ս. Էջմիածնի միաբանութիւնն երախտագէտ հոգւով շարունակեց պատուել նորա յիշատակը։ Կաթուղիկոսներն իրենց միաբաններով տարին մի անգամ գնում էին Օծոպու վանքը, պատարագ էին անում, վանական-